

Հայոց լեզվի հանրապետական փուլի հարցաշարերի պատասխանները և գնահատման չափանիշներ - 11-րդ դասարան

Պատասխանները՝

2. Հաճախ թվում է՝ մեր արարքներն անհետ կորչում են, դառնում անցյալ՝ չքանալով ժամանակի հոլովույթի մեջ: Հիշի՞ր՝ կյանքում ոչինչ՝ լավ թե՛ վատ, անհետևանք չի անցնում, առավել ևս՝ անարդյունք. շիվը՝ քո ձեռքով տնկված, տարիներ հետո սաղարթախիտ ծառ է դառնալու, և խոնջացած մարդը, նրա ստվերում ըմբռնվելով իր հանգիստը, մեղմելով հոգու խռովքը, բարօրություն է մաղթելու քեզ: Բայց քո կտրած մի ճյուղը, մի դալար ճյուղն անգամ մեր հողագնդից՝ պերճահյուս այս մոլորակից, մի բուռ զովասուն շվաք, ախորժալուր մի բույլ սոսափ է պակասեցնում: Եվ դրանից խաթարվում են բնության՝ հրաշք երկունքից ի վեր սահմանված անքակտելի հավասարակշռությունը, նրա ներդաշնակ քերթվածքը՝ անձեռակերտ ու զարմանահրաշ: (20)

3. **հոլովույթ**- շարունակական շարժում՝ ընթացք՝ պտույտ
խռովք- հույզ, տագնապ, վրդովմունք, բարկություն, զայրույթ,
անքակտելի- անխզելի, անխախտելի, անխաթարելի, մնայուն, հաստատուն, հարատև,
քերթվածք- ստեղծագործություն, շինվածք, կերտվածք
անձեռակերտ- բնագրում՝ փխբ. **սքանչելի**, **հրաշակերտ**,
առաքինություն- առաքինի լինելը, անբասիր բարոյականություն՝ վարքուբարք
եղծել- պղծել, ապականել, աղարտել, խաթարել, աղավաղել, խեղաթյուրել
անանձնական - ոչ նյութական, աննյութական, հոգևոր
նկարագիր- բնագրում՝ **հոգեկան կերտվածք**, **բնավորություն**, **բնույթ**, **էություն**
առհավատյալ- գրավական, երաշխիք, ապացույց, վկայություն

4. **ոչինչ** – ժխտական դերանուն, ենթակա,
տնկված- հարակատար դերբայ, որոշիչ,
մաղթելու է- ապակատար ձևաբայ+օժանդակ բայ, ապակատար ներկա, պարզ ստորոգյալ,
քեզ- դեր. հանգման խնդիր,
մոլորակից – գոյ., բուն բացահայտիչ,
դրանից- ցուց. դեր., ներգործող խնդիր / պատճառի պարագա,
նրա- ցուց. դեր., հատկ.,
վերացնելու-անորոշ դերբայ, հատկ. , որոշիչ
որ-հար. դեր. ենթ.

առհավատյալ- գոյ.ստորոգելի

5. ակնարկաշար, գորացույց, հետիոտն, շուրթ, դյուցազն, շերամորդ, դիտանցք, դաշնագիր

6. Կորչել, չքանալ, անցնել, դառնալ, խոնջանալ, կարողանալ,

7. Ցավոք, շատերն իրենց գիտակցական կյանքում այդպես էլ չկարողացան արժևորել Աստծու՝ մահկանացուին՝ աշխարհի միակ բանական էակին շնորհած այդ թանկարժեք պարգևը:

8. երամակ, էակ, ամրակ, ունակ, դիմակ, նվիրակ, ալյակ, խառնակ, պիտակ, ազդակ

9. Մեր /**մեզ** համար, հանձին/**հանձինս** նրանց,
ծանոթանալ փաստերի հետ / **փաստերին**, մզեցնել/**մզացնել**,
ի ուրախություն / **հուրախություն**, առանց զգուշացում/**զգուշացման**,
մի՛ մոտեցնի/**մոտեցրու**, խաբնվել/**խաբվել**,
այլոք / **այլք**, ամբողջ/**բոլոր** մարդիկ

Գնահատման չափանիշները՝

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 1 միավոր:

Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 2 միավոր:

Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:

Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:

Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0, 1 միավոր:

Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

(փոխակերպում և կետադրում):

Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:

Հարց 9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: